ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ՝

Հրանտ Բագրատյանին,

Լևոն Զուրաբյանին,

Արծվիկ Մինասյանին, և

Նաիրա Զոհրաբյանին

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հարգելի պատգամավորներ,

Նամակը հասցեագրում ենք Ձեզ, քանի որ ԱԺ պատգամավորներից առ այսօր ստացել ենք միայն Ձեր դրական արձագանքը, որի համար շնորհակալ ենք: Դուք լավատեղյակ եք, թե քանի պատգամավոր է դեմ քվեարկել «Կուտակային կենսաթոշակների մասին» չարաբաստիկ օրենքին ու դրա հետագա փոփոխություններին ու լրացումներին: Ձեզանից յուրաքանչյուրը նաև ժամանակին բարձրաձայնել է այդ օրենքի մի շարք թերությունների ու հակասությունների մասին:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված **պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը** վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում **2014 թվականի հունվարի 1-ից**: «Ընդդեմ կենսաթոշակային պարտադիր վճարներին» քաղաքացիական նախաձեռնությունն իր սկզբունքային անհամաձայնությունն է հայտնել Օրենքով սահմանված վճարների **պարտադիրության գաղափարի** և մի շարք այլ դրույթների վերաբերյալ, քանի որ այն ոչ միայն չի բխում ՀՀ-ում առկա սոցիալ-տնտեսական իրականությունից, այլև հակասում է ՀՀ Սահմանադրությանը և կենսաթոշակային բարեփոխումների գաղափարին:

Ըստ էության, ՀՀ կառավարությունն անհաջող փորձ է կատարել տեղայնացնելու «միջազգային փորձը», և հերթական անգամ քաղաքացիների շահերը ստորադասվել են ֆինանսական կառույցների շահերին: Օրենքի կիրառումը 2014թ. հունվարի 1-ից նշանակում է քաղաքացիների ընթացիկ աշխատավարձի **փաստացի նվազում մոտավորապես 6-13%-ով** և սա **պաշտոնապես 40 տոկոս աղքատություն արձանագրած երկրում**, որտեղ **2013թ-ի ինը ամիսների ընթացքում մոտ 120 հազար մարդ արդեն լքել է հայրենիքը**: Ըստ էության, կառավարությունը փորձում է իր կողմից կենսաթոշակային վճարումներ կատարելու ֆինանսական բեռը տեղափոխել քաղաքացու վրա: Կառավարությունը, ունենալով նվազագույն սոցիալական կենսաթոշակ վճարելու պարտավորություն, **անհասկանալիորեն և ոչ իրավական եղանակով փորձում է պարտադրել անձին վճարել հավելյալ գումար՝ նվազագույն (սոցիալական) կենսաթոշակից ավել թոշակ ստանալու համար**: Մինչդեռ,

նվազագույնից ավել թոշակ ստանալը կարող է իրականացվել միայն կամավոր հիմունքներով, այլ ոչ թե պարտադիր կարգով: Որևէ մեկը իրավունք չունի անձին պարտադրել անելու որևէ գործողություն նվազագույնից ավել կենսաթոշակ ստանալու համար: Այսինքն, Օրենքի այս պարտադիր բաղադրիչը չունի իրավական հիմնավորում և ակնհայտ հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Օրենքը **պարտադրում է** 1974թ.-ից հետո ծնված[1] բոլոր անձանց կատարել վճարումներ անհայտ ծագումով ֆոնդերին, որպեսզի քաղաքացին տարիներ անց ստանա կենսաթոշակ՝ իր իսկ վճարած գումարի հաշվին: Ընդ որում, այդ տարիների ընթացքում անձը **չի ստանում իր վճարած գումարի դիմաց բանկային տոկոսադրույք** (այլ միայն գնաճային տոկոս), մինչդեռ ֆինանսական ֆոնդերը կառավարող կառույցները ՀՀ քաղաքացիների **գումարները ներդնելու են արտերկրում,** ստանալու են **գերշահույթ, զարգացնելու են այլ պետությունների տնտեսությունը**, իսկ ՀՀ կառավարությունը երաշխավորելու է քաղաքացիների կատարած վճարումների **միայն 30 տոկոսը՝ այն էլ պետբյուջեի հաշվին, որը գոյանում է հենց նույն քաղաքացու կամ գործարարի հարկային վճարումներից**:

Կառավարությունը փորձել է կրկնօրինակել աշխարհում տարածում գտած երկու բաղադրիչ ունեցող մոդելը (այն է՝ պետական նվազագույն կամ սոցիալական կենսաթոշակ – 100 տոկոս պետբյուջեից ֆինանսավորվող և կամավոր), սակայն երկու բաղադրիչի փոխարեն ներդրել է 3 բաղադրիչ ունեցող համակարգ, ու արհեստականորեն ավելացրել է միջանկյալ մի բաղադրիչ՝ պարտադիր բաղադրիչ պետության և քաղաքացու կողմից 50/50 մասնակցությամբ: Գրեթե ամբողջ աշխարհում գոյություն ունի սոց. վճարը որպես հարկատեսակ (social security), որը ՀՀ-ում եկամտային միասնական հարկի սոց. վճարի մասն է, և կամավոր կենսաթոշակային վճար, երբ պետությունը կամ գործատուն քաղաքացու վճարած կամավոր գումարի չափով ևս վճարում է կատարում (matching): Սա կամավոր վճարի խրախուսման մեխանիզմն է: Սակայն մեր պարագայում կառավությունը կիրառել է միջանկյան պարտադիր matching: Նման լուծումը անարդարացի է և ոչ իրավաչափ, քանի որ ստացվում է մենք վճարում ենք և սոց. վճար և պարտադիր մասնակցում մեր թոշակի ձևավորմանը, որն ըստ էության կրկնակի հարկում է:

Հիմնախնդրին լուծում տալու ակնկալիքով՝ Նախաձեռնության ջանքերով կազմակերպվել է ստորագրահավաք, որի արդյունքում ավելի քան 2700 քաղաքացիներ դիմել են ՀՀ վարչապետին, ով սակայն, հարցը վերահասցեագրել է Սոց. Ապ. նախարարություն: Դիմում-նամակ ենք հղել նաև Մարդու իրավունքների պաշտպանին՝ խնդրելով վիճարկել Օրենքի սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում: ՀՀ մի շարք

[1] Ուսումնասիրելուց հետո 2010թ-ին օրենքի և դրանում հետագայում 2011-2013թթ ընթացքում կատարված փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, դրանց վերաբերյալ քվեարկության արդյունքները, մենք լուրջ մտավախություն ունենք, որ կառավարությունը փորձում է “սահուն կերպով” ավելացնել քաղաքցիների ֆինանսական բեռը, առայժմ բավարարվելով 1974թ.–ից հետո ծնված անձանցով:

քաղաքացիներ նամակներ են ուղղել ԱԺ պատգամավորներին և խմբակցություններին՝ պահանջելով վեր կանգնել կուսակցական շահերից և նախաձեռնել ստորագրահավաք՝ ԱԺ-ում արտահերթ նիստ գումարելու և Օրենքը փոփոխելու նպատակով (**վերացնել ՊԱՐՏԱԴԻՐՈՒԹՅԱՆ բաղադրիչը**), կամ հակառակ պարագայում, եթե չհաջողվի հավաքել անհրաժեշտ 44 ստորագրություններն արտահերթ նիստ գումարելու համար, ապա հավաքել 27 ստորագրություն՝ սահմանադրական դատարան դիմելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակին Օրենքին դեմ են քվեարկել ավելի քան 30 պատգամավորներ, համարում են իրատեսական նման ստորագրահավաքի նախաձեռնումը:

Սույն նախաձեռնությանը միացած ավելի քան 7000 քաղաքացիներ վճռականություն են հայտնում պայքարը շարունակել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով չարգելված բոլոր օրինական, այդ թվում՝ հրապարակային միջոցառումների, երթերի ու ցույցերի միջոցով:

Մենք ակնկալում ենք բոլոր մտահոգ քաղաքական և քաղաքացիական ուժերի, ինչպես նաև անհատ քաղաքական գործիչների ու պատգամավորների դրական արձագանքը և համախմբումը այս կարևորագույն հարցի շուրջ՝ հայտնելով բոլոր մտահոգ ուժերի հետ համագործակցելու մեր պատրաստակամության մասին: Մենք գիտակցում ենք, որ Ձեզանից յուրաքանչյուրը կամ Ձեր կողմից ներկայացվող քաղաքական ուժերը կարող են ունենալ որոշակի տարաձայնություններ այս կամ այն հարցի շուրջ: Սակայն մենք խնդրում ենք վեր կանգնել այդ տարաձայնություններից, քանի որ խոսքը գնում է կարևորագույն հարցի մասին: Մեր պայքարը չի ճանաչում կուսակցական պատկանելություն կամ նախասիրություն:

Խնդրում ենք ներկայացնել մեր նախաձեռնության դիրքորոշումը ԱԺ-ի ամբիոնից՝ մեր անունից խնդրելով բոլոր շահագրգիռ ու մտահոգ քաղաքական գործիչներին ու պատգամավորներին միանալ այս պայքարին և մասնակցել ստորագրահավաքին՝ ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանված կարգով, հնարավորինս սեղմ ժամկետներում:

Մենք թույլ չենք տա, որ ԱԺ-ում իր կամակատարներին կոճակ սեղմելու պատվեր տվող կառավարությունը խեղաթյուրի կենսաթոշակային բարեփոխումների էությունը և վտանգի մեր և մեր ապագա սերունդների ճակատագիրն ու ֆինանսական անվտանգությունն իր անտարբեր, ոչ պրոֆեսիոնալ և ոչ իրավաչափ վարքագծով:

Պայքարի զարգացումներին կարող եք հետևել նաև հատուկ ստեղծված http://dem.am կայքից և ֆեյսբուքյան խմբից՝ https://www.facebook.com/groups/659878787373449/

Հարգանքով՝

«Ընդդեմ կենսաթոշակային պարտադիր վճարներին» նախաձեռնություն

Փաստաբան Հայկ Գրիգորյան

11/11/2013թ. _____